ՆՈՐՎԵԳԻԱՅՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ ՆՎԻՐՎԱԾ ՍՈՒՐԲ ՎԱՅՐԵՐԻՆ

Հուլիսի 26-28-ը Թրոնդայմում (Նորվեգիա) տեղի ունեցավ Միջազգային համաժողով՝ նվիրված Սուրբ Վայրերին: Համաժողովի թեման էր «Սուրբ Վայրեր. Վայրեր կոնֆլիկտի կամ երկխոսության համար»:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ժողովին մասնակցում էին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Ճեմարանի տեսուչ Տ. Սահակ վրդ. Մաշալյանը և Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի Տեղեկատվական համակարգի տնօրեն Տ. Վահրամ քհն. Մելիքյանը:

Համաժողովի մասնակիցներն անդրադարձան կոնֆլիկտային գոտիներում գտնվող սրբավայրերին, ինչպիսիք են օրինակ Երուսաղեմում և Իրաքում գտնվող սրբավայրերը: Համաժողովի հիմնական նպատակն էր քննարկել կոնֆլիկտային գոտիներում գտնվող սրբավայրերի պահպանության և դրանք հետագա սերունդներին անվնաս փոխանցելու հարցեր:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ